ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ

Երևան, 22 մարտի, 2012թ – Այսօր Ազգային սոցիալական բնակարանային ասոցիացիայի (ԱՍԲԱ) և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) հայաստանյան գրասենյակի համատեղ նախաձեռնությամբ <<Անի Պլազա>> հյուրանոցում տեղի ունեցավ միջազգային համաժողով <<Գործընկերություն հանուն սոցիալական բնակարանների>> թեմայով:

Կոնֆերանսին մասնակցում էին ՀՀ ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը, Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Դաֆինա Գեռչևան, Հայաստանում Նիդեռլանդների Թագավորության փոխդեսպան Էնջել Սամուրան:

Ոլորտի առաջատար մասնագետներ էին ժամանել նաև Նիդեռլանդներից, Շվեյցարիայից, Մոնտենեգրոյից, Բուլղարիայից, և Ռումինիայից: Հայաստանը ներկայացնում էին գործընկեր նախարարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

ՀՀ ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Ա. Բաղդասարյանը ողջունելով միջազգային համաժողովի մասնակիցներին և կարևորելով իրականացվող ծրագիրը, մասնավորապես շեշտեց, - <<Բնակարանային հիմնահարցի լուծումը կարևորագույն նշանակություն ունի Հայաստանի կայուն զարգացման և ազգային անվտանգության ռազմավարության տեսակետից: Առանց բնակարանային խնդրի լուծման անհնարին է անդրադառնալ երկրում ժողովրդագրական, միգրացիայի, մարզերի համաչափ զարգացման, նմանատիպ այլ խնդիրների լուծմանը: Այսօրվա միջազգային համաժողովն ապացույցն է այն փաստի, որ մեր երկրի ղեկավարությունը լուրջ ուշադրություն է դարձնում սոցիալական բնակարանների զարգացմանը, ինչը կնպաստի թե կարիքավոր ընտանիքների բնակարանային խնդիրի լուծմանը և թե միջին խավի կայացմանը: Վստահ եմ, որ միջազգային գործընկերների օգնությամբ մենք կկարողանանք սեղմ ժամկետներում ապահովվել սոցիալական բնակարանների կայուն զարգացումը մեր երկրում, ստեղծելով նպաստավոր օրինական դաշտ այս ոլորտում երկարաժամկետ ներդրումներ իրականացնելու, կարիքավոր ընտանիքներին հասցեագրված աջակցություն տրամադրելու համար>>:

ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Դաֆինա Գեռչևան, բարձր գնահատելով միջազգային համաժողովի անցկացման փաստը, իր խոսքում նշեց,- <<Դեռ չի լրացել մեկ տարին, ինչ ՄԱԶԾ-ն և ԱՍԲԱ հիմնադրամը համաձայնագիր ստորագրեցին Հայաստանում սոցիալական բնակարանների զարգացմանն ուղղված համատեղ գործողությունների մասին: Այսօր մենք կարող ենք արձանագրել, որ այդ

համագործակցությունը իր արդյունքներն է տալիս, ինչի վկայությունն այս համաժողովն է: ՄԱԶԾ-ն աջակցում է այն նախաձեռնություններին, որոնք նպաստում են Հայաստանի կայուն զարգացմանը: Սոցիալական բնակարանների զարգացումը այն կարևորագույն խնդիրներից է, որի լուծմամբ է պայմանավորված հայ ժողովրդի բարեկեցությունը, երկրի տնտեսական և սոցիալական առաջխաղացումը, երիտասարդ ընտանիքների ապագան և տարեց մարդկանց սոցիալական ապահովվածությունը:
Ակընկալում եմ, որ արդյունավետ քննարկումների արդյունքները հիմք կհանդիսանան Հայաստանում սոցիալական բնակարանների զարգացման ազգային ռազմավարության համար>>:

Միջոցառման մասնակիցները քննարկեցին Հայաստանում սոցիալական բնակարանների զարգացման ընթացքը՝ դիտարկելով այն միջազգային փորձի շրջանակներում:

Միջազգային, մասնավորապես Նիդեռլանդների փորձը ցույց է տալիս, որ ծրագրի արդյունավետությունը կախված է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության արդյունավետ համագործակցությունից: Տեղական և միջազգային փորձագետների կարծիքով սոցիալական բնակարանները կարող են լուծել մեր հասարակության առջև ծառացած մեծ թվով խնդիրներ, որոնցից են բացասական ժողովրդագրական փոփոխությունները, միգրացիան, ազգաբնակչության ծերացումը, և աղքատությունը:

Հայաստանում սոցիալական բնակարանների զարգացման ծրագիրն իրականացվում է Նիդերլանդների արտաքին գործերի նախարարության <<Մատրա>> սոցիալական վերափոխումների ծրագրի ֆինանսական աջակցությամբ:

***

ԱՍԲԱ-ն (Ազգային սոցիալական բնակարանային ասոցիացիան) հիմնադրվել է 2010թ հայ-հոլանդական համագործակցության արդյունքում: Ազգային սոցիալական բնակարանային ասոցիացիան շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որի նպատակը Հայաստանում ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքներին մատչելի և որակյալ բնակարաններով ու դրանց համապատասխան սպասարկմամբ ապահովելն է: ԱՍԲԱ-ի հոգաբարձուների խորհրդի կազմում ընգրկված են հայ և հոլանդացի փորձագետներ:

***

ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը գործընկերային կապեր է հաստատում հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչների հետ՝ զորակցելով պետություններին դիմակայելու ճգնաժամերին: ՄԱԶԾ-ն խթանում է նաև աճը, որ կոչված է բարելավելու յուրաքանչյուր անձի կյանքի որակը: Մնայուն ներկայություն ունենալով 177 երկրներում և տարածքներում՝ մենք համաշխարհային փորձ և տեղական լուծումներ ենք մատուցում՝ նպաստելով կյանքի բարելավմանը և աջակցելով կայուն պետականության ձևավորմանը:
ՄԱԶԾ-ն հաստատվել է Հայաստանում 1993թ. մարտին և աջակցում է կառավարությանը մինչ 2015թ. իրականացնելու ազգային զարգացման առաջնահերթությունները, ինչպես նաև հասնելու Հազարամյակի զարգացման նպատակներին: